

Վարդան Մատթեոսեան, Գրական-բանասիրական ուսումնասիրութիւններ, խմբագիր՝ տորթ. Արմենակ Եղիայեան, Անթիլիաս, Լիբանան, 2009, 663 էջ*:

Հայագիտական հանդեսների և սփյուռքահայ մամուլի էջերում մշտապես առանձնանում են պատմական գիտությունների թեկնածու, գրականագետ, բանասեր, թարգմանիչ, հայագիտության դասախոս, խմբագիր **Վարդան Մատթեոսեանի** հոդվածները: Դրանք աչքի են ընկնում հայ գրականության հայտնի ու մոռացված դեմքերի կենսագրական կնճիռների պարզաբանման հետևողական նախանձախնդրությամբ, նրանց գրական վաստակը արժևորելու, անհայտությունից փրկելու ազնիվ մղումով:

Բացառիկ են հատկապես նրա «Կոստան Զարեանի շուրջ» (1998) և «Գրական-բանասիրական ուսումնասիրութիւններ» (2009) աշխատությունները՝ իրենց նյութի նորության, օտարալեզու գրականության և մամուլի լայն շրջանառության, գիտական մտքի ճշտապահության ու հազեցվածության իմաստով: Մակայն եթե դրանցից առաջինը ուշադրության արժանացավ և՛ Սփյուռքում, և՛ Հայաստանում, ապա երկրորդը, ցավոք, գնահատվեց միայն սփյուռքահայ մտավորականության կողմից¹:

1. Սփյուռքահայ գրականության նախապատմությունը, ձևավորումն ու ընթացքը

Վարդան Մատթեոսեանի «Գրական-բանասիրական ուսումնասիրութիւններ» հատորն ամփոփում է բանասերի շուրջ քսան տարվա (1987–2009) գիտական պրպտումների արգասիքը: Այն բաղկացած է երեք բաժնից՝ «Ուսումնասիրութիւններ», «Գրախոսականներ» և «Անդրադարձներ», ինչպես և «Մատենագիտական» ցանկից ու «Փոխան յառաջաբանի» ներածականից: Ներածականում Մատթեոսեանը հուշում է հատորը կազմելու մեթոդաբանական ուղին. «Պատմութեան և գրականութեան հանդէպ մեր հետաքրքրութիւնը պատճառ դարձած է մնայուն տարուբերումի այդ երկու բևեռներուն միջև: Այս ժողովածուն քայլ մըն է այդ

*Ընդունվել է տպագրության 25.08.2013:

1 Տես Ս. Կիրակոսեան, Վարդան Մատթեոսեան և իր յարգելի վաստակը («Գրական-բանասիրական ուսումնասիրութիւններ»ուն առիթով), «Ազդակ» օրաթերթ, Պէյրուք, 30 հոկտեմբեր, 2010: Տես նաև՝ Մարկ Նշանեան, Համագրայնացումի Բարոյականութիւնը (Վարդան Մատթեոսեանի Գրական-Բանասիրական Ուսումնասիրութիւններ Գիրքի Առթիւ), «Հայկազեան Հայագիտական Հանդէս», Պէյրուք, 2012, էջ 568–580:

տարուբերումին ցրի արդիւնքը մէկտեղելու ուղղութեամբ»²: Այս համադրության արդյունքում է ստեղծվել Վարդան Մատթէոսեանի գիտական հետազոտությունն իր յուրօրինակ, գրեթե անվրեպ բժախնդրությամբ, հարցադրումների հստակությամբ ու հնարավորինս սպառիչ պատասխաններով, իսկ նրա առաջադրած հարցականները հուշում են բանասիրության և գրականագիտության բացթողումները: Այս իմաստով առավել քան ճշգրիտ է ընտրված գրքի վերնագիրը՝ «Գրական-բանասիրական ուսումնասիրություններ»:

Չնայած իր խիստ գիտական բնույթին՝ հատորն ընթերցվում է լարված ուշադրությամբ: Հեղինակի հետաքրքրություններին զուգահեռ լայն է նաև հետազոտության առարկան՝ ընդգրկելով հայ գրականության պատմության մեկդարյա ուղին ու ճակատագիրը, ներառյալ սփյուռքահայ գրականությունը:

Վարդան Մատթէոսեանի գրական նախասիրությունների ծիրում հատկապես առանձնանում են երկու ստեղծագործող՝ Եղիշե Չարենցը և Կոստան Զարյանը: Կոստան Զարյանը եղել և մնում է հետազոտողի բանասիրական պրպտումների ու հետաքրքրությունների գլխավոր առանցքը: Գրքի առաջին բաժնում Վարդան Մատթէոսեանը գրողի կենսագրությանը, ստեղծագործությանն ու գրական առնչություններին անդրադարձել է ութ հոդվածով՝ այդ կերպ համալրելով 1998 թ. Անթիլիասում լույս տեսած իր «Կոստան Զարեանի շուրջ»³ աշխատությունը, իսկ «Գրախօսականներ» բաժնում նա հանգամանորեն անդրադառնում է Կոստան Զարյանի «Սպանիա», «Միացյալ Նահանգներ», «Նավատումար», «Դեպի Արարատ» գրքերի երևանյան հրատարակություններին և Արծրուն Ավագյանի «Կոստան Զարյան. կյանքը և գործը» մենագրությանը՝ յուրաքանչյուր աշխատանքի արժևորումներով և հետագա հրատարակություններում նկատած թերությունների վերացման ակնկալիքով:

Գրականության պատմության էջերում ուշագրավ, երբեմն հակասական գնահատականներով են ուղեկցվում հին ու նոր սերունդների պայքարը, գեղագիտական նոր ձևաբանումներին ուղեկցող պահպանողականությունն ու երիտասարդների հախումն, ըմբոստ, հաճախ հանդուրժողականությունից զուրկ ժխտողական կեցվածքն անցյալի ու նրա գրականության, արվեստի ու գեղագիտական չափանիշների հանդեպ: Այդպիսի փուլեր անցավ նաև Կոստան Զարյանը «Մեհյանի»-ի շրջանում որպես երիտասարդ, իսկ սփյուռքահայ գրականության ձևավորումից հետո՝ որպես ավագ սերնդի ներկայացուցիչ: Այսպես, «Հարդագող» խմբակցության և Վ. Շուշանյանի քննադատականների առաջին թիրախը Զարյանն էր: Վերջինս հետագայում անուղղակիորեն արձագանքեց նրանց թե՛ իր օրագրություններում, թե՛ «Արևմուտք» շարքում:

Բանավեճն իր յուրօրինակ շարունակությունն ունեցավ, երբ Կ. Զարյանը ստացավ «Յուսաբեր»-ին աշխատակցելու Վահան Նավասարդյանի հրավերը, իսկ Շավարշ Միսաքյանի քննադատական խմբագրականին ցավով արձագանքեցին Ա. Չոպանյանը, Ա. Ահարոնյանը, Ռ. Դարբինյանը՝

2 Վարդան Մատթէոսեան, Գրական-բանասիրական ուսումնասիրություններ, էջ 5 (գրախոսվող գրքից հետագա մեջբերումները տրվում են տեքստում փակագծերի մեջ):

3 Վարդան Մատթէոսեան, Կոստան Զարեանի շուրջ, Տպարան Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Անթիլիաս-Լիբանան, 1998, 468 էջ:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ե (ԺԵ) քառի, թիվ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

վեր հանելով և մատնանշելով ժամանակի գրական բարքերը, բանակռիվ վարելու «էթիկան»:

Այդ «էթիկան» իր յուրօրինակ դրսևորումներն ուեցավ Ջարյան-Օշական, Ջարյան-Ծառուկյան, Ջարյան-Շուշանյան փոխհարաբերություններում, որոնց Մատթէոսեանն անդրադարձել է «Յակոբ Օշական և Կոստան Ջարեան», «Անդրանիկ Ծառուկեան և Կոստան Ջարեան», «Վազգեն Շուշանեան և Կոստան Ջարեան», «Նեղոսի ավեն առ Կոստան Ջարեան» հոդվածներում: Դրանցում պարզաբանվում են հայ մտավորականության փոխհարաբերությունների ամեղծվածները, նրանց նամակագրությունը, հուշագրությունները, շրջանառվում են անգամ բանավոր վկայությունները, հասարակական-մշակութային գործունեությունը՝ սփյուռքահայ մամուլի պատմությանը զուգահեռ:

Գրական կապերի գեղարվեստական փոխաձևումների իմաստով առանձնանում են մասնավորապես Կ. Ջարյան-Օշական, Կ. Ջարյան-Լոուրենս Դարրել փոխհարաբերությունները քննող Վարդան Մատթէոսեանի հոդվածները: Եթե «Մեհյանի»-ի և «Բարձրավանք»-ի շրջանում Ջարյանն ու Օշականը բարեկամներ էին, ապա տարագրության մեջ նրանց հարաբերությունները խզվում են: Փոխադարձ հակակրանքը ցուցադրվում է թե՛ հուշագրություններում, թե՛ ստեղծագործություններում («Մինչև ու՞ր»): Մինչդեռ միանգամայն հակադիր է Ջարյան-Դարրել կապը («Երկու «աքտորեալներ» Գորֆուի մէջ»)՝ բարձր, անկաշկանդ, հիացական, անկեղծ՝ հետագայում գեղարվեստական երկերում փոխադարձաբար միմյանց կերպավորելով, թերթ հրատարակելու չիրականացված ծրագրերով, արվեստի, փիլիսոփայության շուրջ մտքերի փոխանակությամբ, նամակագրությամբ, հուշագրությամբ: Սա՝ որպես գրական երևույթ, հետագայում պիտի իր վրա բևեռեր նաև գրականության օտարազգի պատմաբանների ուշադրությունը⁴:

Ջարյանի կենսագրության բարդ շրջանները կապված են Կ.Պոլսի և Հայաստանի հետ: Գրողի՝ Կ.Պոլսում հանգրվանելու և մշակութային շարժում ստեղծելու կրկնակի ու ձախողված ձիգերը մասամբ փարատվում են «Մեհյան» և «Բարձրավանք» հանդեսների հիմնադրմամբ: Որքան էլ քաղաքը ձգում էր նրան, նույնքան էլ «երկդիմի» էր նրա հմայքը, և աղետից խուսափելու միակ ուղին «Պոլիսը լքելն» էր, նրան «հաղթելը»: Թերևս միակ ընդգծելին «Մեհյան»-ում առաջադրած և «Բարձրավանք»-ի դավանած գեղագիտական հարցադրումներն էին, որ իրենց շարունակությունն ունեցան թե՛ Ջարյանի և թե՛ Օշականի ստեղծագործություններում (էջ 49):

Հայաստանում Ջարյանի հաստատվելու կրկնակի ձիգերը ևս ողբերգական երանգներով են լի: Թեև առաջին շրջանում (1922-1924 թթ.) նա կարողացավ սթափ մտքով գնահատել քաղաքական կացությունը և հեռանալ երկրից, սակայն «տարագրի» իր վիճակը հուշում էր վերադարձ «դեպի Արարատ»:

Վարդան Մատթէոսեանի «Վերջին ողիսականը» ուսումնասիրության նյութ են ընտրվել Կոստան Ջարյանի՝ հայրենիք այցելելու, այստեղ վերջ-

4 Այս մասին հանգամանորեն տե՛ս **Савельева И.Г.** Шекспировская традиция в путевой книге Лоренса Даррелла «Келья Просперо» // Вестник Пермского университета. Российская и зарубежная филология, 2012, N 1 (17), с. 125-129.

նականապես հանգրվանելու սփյուռքյան արձագանքները, «Նավը լեռան վրա» վեպի, «Տատրագոմի հարսը» պեմի երևանյան հրատարակության կնճիռները, «Գիրք դյուցազներգությանց»-ի ձեռագրերի ողիսականի և հետմահու հրատարակության (Երուսաղեմ, 1978, Երևան, 2003) պատմությունը, իր ստեղծագործական ժառանգության հետագա հրատարակության վերաբերյալ պատգամի փոխանցումը որդու՝ Արմեն Զարյանի միջոցով. «Ոչ մի հրատարակություն մինչև Հայաստանի իսկական անկախությունը, մինչև պետության գլուխ կանգնեն ազնի ու մեծ մտքի մարդիկ, մինչև իրականանայ իր պատկերած Հայաստանի գոյությունը» (էջ 315):

Մատթեոսեանի բանասիրական պրպտումների գլխավոր առանցքը սփյուռքահայ գրականությունն է, նրա պատմությունը, այդ պատմության օբյեկտիվ գնահատումն ինչպես գրականության պատմաբանի, այնպես էլ սփյուռքահայի դիրքերից: Սփյուռքահայ գրականության ձևավորման ծիրում քննաբանվում է նաև հայրենիքի կորուստը յուրովի վերապրած Զարենցը: Զարենցի կյանքի, ստեղծագործության հանդեպ բանասերի սևեռուն հետևողականությունն առանձնապես շեշտված է «Նորահնար առասպելներ Զարենցի մասին» անդրադարձում՝ Ալմաստ Զաքարյանի եռահատոր ուսումնասիրության առթիվ: Այստեղ Մատթեոսեանն ընդգծում է գրականագետի սուբյեկտիվ վերաբերմունքը, հակադրվում է խմբագրին և շեշտում է, թե «Փաստերու տրամաբանությունը և գիտական աշխարհայեցողությունը, ցաւօք, հոս կը փայլին իրենց բացակայութեամբ» (էջ 128):

Իսկ իր ««Սոմա»՝ գրականություն և առասպել» հոդվածում, հրնթացս բանասիրական ճշգրտումների, Մատթեոսեանը դիտում է, որ եթե սոման՝ աստվածային նեկտարը, խորհրդանշում է հեղափոխությունը (=աղետ՝ ցեղասպանություն) կամ կրակը՝ հավերժ կրկնվող ավերումն ու մաքրագործումը, զոհաբերությունը՝ մահը կամ սուգը (էջ 57-59), ապա իր հարցադրումներով առավել լայն կտավ է ««Երկիր Նայիրի»՝ Կարսի անկումին սուգը» անդրադարձը: Հեղինակի կարծիքով նրանում Զարենցը Կարսի (= պետականության) կորուստն է սգում՝ գրելով «պատմություն» և այդ կերպ փորձելով «արձանագրել, սգալ և բուժել»: Բայց եթե Նայիրին նույնանում է Մագուրի Համոյին, ապա Կարսը հենց իր՝ բանաստեղծի հորը. «... Զարենց կ'ողբայ Կարսի կորուստը և կը թուի, թէ իր սեփական սուգը մշակած է Նայիրիի թաղումով: ...Յստակ է, ... որ Զարենց պատմութեան իր խոհերը շարունակեց մէկ ու միակ նպատակով. հորենական քաղաքի՝ Կարսի, և, հետևաբար, հոր սուգը աւարտել» (էջ 127):

Անհրաժեշտ է շեշտել, որ գրականագետը շրջանառության մեջ է դրել օտարալեզու և Սփյուռքում ու Հայաստանում տպագրված արխիվային փաստաթղթերը, մամուլն ու գրականագիտական, գեղարվեստական հսկայածավալ գրականությունը: Նրա ուշադրությունից չի վրիպել ոչ մի փաստ, հեռավոր կամ հպանցիկ որևէ ակնարկ, որոնց համադրության արդյունքում հարթվում է հերթական բանասիրական կնճիռը: Այսպես, «Վահան Թոթովենցի կենսագրութեան հարցեր»-ում Մատթեոսեանը ճշգրտում է Թոթովենցի ծննդյան տարեթիվը, այդ առիթով անդրադառնում է գրողի վերաբերյալ ծավալված Մարկ Նշանեան-Թորգոմ Փօսթանձեան բանավեճին՝ սրբագրելով ու հերքելով վերջինիս թյուրըմբռումները:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ե (ՃԵ) ԳԱՐՍԻ, ԹԻՎ 3 (43) ՀՈՒՅԻՍ-ՄԵԿՐԵՄԵՐ, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

«Հրանտ Նազարեանց և իր գրական կապերը» հոդվածում հստակեցվում են բանաստեղծի ծննդյան, հոր մահվան տարեթվերը, քննվում են այն դրդապատճառները, որոնք ստիպեցին Նազարյանցին լքել հայրենիքը, հաստատվել Իտալիայում և գրական հանրությանը ներկայանալ նախ՝ թարգմանաբար, ապա և իտալերեն ստեղծագործելով: Հրանտ Նազարյանցին անդրադառնալու Մատթեոսեանի նախապատճառը, թերևս, արևմտահայ գրականության պատմության ծիրում սկիզբ առած ֆուտուրիստական շարժման պատմությունն է⁵:

Իտալիայում հաստատվելը նախանշել է Նազարյանցի արվեստի անակնկալ ու շոնդալից հաջողությունը: Լույս տեսած դրվատական արձագանքները նպաստել են բանաստեղծի ստեղծագործությունների հրատարակվելուն՝ իսպաներեն ու կատալոներեն թարգմանությամբ, մինչդեռ հայալեզու մամուլը շարունակում էր իր քննադատական սլաքներն ուղղել բանաստեղծին՝ նրա մեծարումը «հայ մշակույթի արժեքին դեմ հարուած» համարելով (էջ 75):

Այս իմաստով տեղին են Մատթեոսեանի հարցականները. արդյո՞ք «գրադատները Նազարեանցի բարեկամներն ու անոնց բարեկամներն էին, թե՛ անաչառ անհատներ: Ի՞նչ էր անոնց խոսքին իսկական կշիռը: Ինչպե՞ս բացատրել Նազարեանցի գտած ընդունելությունը Իտալիոյ մէջ. իր գրական արժանիքներով, թարգմանիչներու միջնորդութեամբ, թե՛ բարեկամական ցանցով: Ան նոր բան կը բերէր իտալական բանաստեղծութեան» (էջ 75): Մեկ առ մեկ թվելով Նազարյանցի քերթվածների հրատարակություններն ու թարգմանությունները (ըստ մամուլի, տարեթվերի, հրատարակչությունների)՝ գրականագետը զուգահեռաբար ուրվագծում է նաև թարգմանիչների, հրատարակիչների կենսագրության ու գործունեության գրական-հասարակական կողմերը:

Նազարյանցի արվեստն ու շաղկրության արժանացավ Բարսելոնայի «Մերվանտես» հրատարակչության տնօրեն Ֆեռնանդո Մարիաթանիի կողմից և հրատարակվեց «Լավագույն բանաստեղծների (քնարական) լավագույն բանաստեղծությունները» մատենաշարով (N 23)՝ Ալֆոնսո Մասերասի թարգմանությամբ (էջ 76-77): Հատկանշական է, որ վերջինս մշտապես իր ուշադրության կենտրոնում էր պահում ինչպես Նազարյանցի արվեստը, այնպես էլ հայ գրականությունն ընդհանրապես: Նա կատալոներենով հանդես է եկել Հայաստանի ու հայ գրականության մասին դասախոսություններով՝ «անդրադառնալով հին և ժամանակակից բանաստեղծներուն» ու 1925 թ. հրատարակելով «Հայ ժամանակակից բանաստեղծությունը» հոդվածը:

Նազարյանն, ըստ էության, վերջինիս համար բնաջնջման ենթարկված փոքր ազգի խորհրդանիշն էր, ով իր ստեղծագործությամբ ներկայանում էր համաշխարհային գրականությանը՝ անուղղակիորեն դեսպանորդի դեր ստանձնելով ինչպես ազգային խնդիրների, այնպես էլ գրական կապերի առնչությամբ: Էական է այս ամենի արձանագրումն ու վերարժևորումը գրականության պատմության էջերում: Սա էլ փորձում է իրագործել Վարդան Մատթեոսեանն իր բազմախոսուն հարցականներով ու խորաքննի վերլուծականներով:

5 Հրանտ Նազարեանց, Խաչուած երագներ, Պոլիս, 1911, նկարագարդումը՝ Կ. Ջարեանի:

«Օտարագիր գրագէտներ և հայկական հարցեր» անդրադարձում Մատթէոսեանի ուշադրության կենտրոնում օտարալեզու այն գրողներն ու արվեստագետներն են, ովքեր իրենց ստեղծագործությամբ, հետաքրքրությամբ, ծանոթությամբ կամ այլ հանգամանքների բերումով հիշում են Հայաստանը, նրա պատմությունը: Այսպես՝ հայկական թեման շոշափվում է Լուուրենս Դարելի «Մն գիրքը» վեպում, ուր հիշվում են Հայոց ցեղասպանությունը վերապրած և Կորֆու փոխադրված հայ որբերը, Մարիա Անիսեյա Անգալդայի «Արամի տետրը» վեպում՝ կերպարների համակարգում ներառելով նաև Դանիել Վարուժանին: Վերջինիս վեպը կատալոներենով գրված Մեծ եղեռնի վերաբերյալ առաջին գեղարվեստական երկն է: Իրենց ստեղծագործություններում հայերին են հիշատակում կամ հայի կերպար կերտում Հենրի Միլլերը («Վարդագույն խաչելություն»), Ումբերտո Էկոն («Վարդի անունը»), Ադոլֆո Պիո Գասարեսը («Երկնային հենքը»), Խորխե Լուիս Բորխեսը և ուրիշներ:

Վարդան Մատթէոսեանի «Արեղեանները և ծանօթագրութեան վնասները» հոդվածի շարժառիթը ամերիկացի հայագետ Ջեյմս Ռասելի ծանօթագրական սխալներն են: Դրանք գիտական շրջանառության մեջ են դրվում և հաճախ դառնում անհերքելի մասնավորապես օտարալեզու լինելու պատճառով: Իր հոդվածում Մատթէոսեանը քննում է Մանուկ Արեղեանի և նրա եղբորորդի Արտաշես Արեղեանի գործունեության վերաբերյալ Ե. Չարենցի գրառումներից մեկի⁶ թարգմանությանը կից Ռասելի իրականացրած դիտարկումը: Ըստ դրա՝ Մ. Արեղեանը «պատրաստակամօրէն ինքզինքը յարմարցուցած էր խորհրդային վարչակարգին՝ հայերէնի ուղղագրութեան բարեփոխումը ստանձնելով... Արեղեան 1930-ական թուականներէն ստալինեան շողոքորթի պտուղները վայելեց: (Թերևս այս մնացորդային ենթամարդկութիւնը ... ընտանեկան էր. իր եղբայրը՝ Արտաշէս Արեղեանը... աւելի ուշ նոյն տասնամեակին գիրք մը գրեց, փորձելով Հիթլերին փաստել, որ հայերը «արիական ցեղ»ին կը պատկանէին»)» (էջ 205):

Եթե պարզ թվաբանական գործողությամբ Վարդան Մատթէոսեանը ձգբրտում է ուղղագրության ռեֆորմի տարեթիվը, ցրում է դրանից բխող լեզվական բարեփոխումների վերաբերյալ անհեթեթ պնդումները, հերքում Մ. Արեղեանին անհարկի վերագրված մեղադրանքները, ապա Արտաշես Արեղեանի վերաբերյալ հնչած անարդարացի բնորոշումները նրանից պահանջում էին ավելի հիմնավոր հետազոտություն: Դա էլ ստանձնում է գրականագետը:

Հիտլերյան վարչակազմի տարիներին «Գերմանա-հայկական ընկերության» փոխնախագահ Ա. Արեղեանի ակտիվ գործունեության շնորհիվ հայերը գերծ մնացին երկրորդ անգամ Եղեռնի մղձավանջն ապրելու սարսափից: Հայերի՝ սեմական ռասայից տարանջատելու արեղյանական ջանքերն ապարդյուն չանցան: Սա նշանակալից էր հատկապես այն պարագայում, երբ «քուլիսներու ետին» տակավին շարունակում էր գործել թուրքական «հակահայ քարոզարշավը» (էջ 213-215), որ վտանգավոր

6 Խոսքը Ավետիք Բահաթյանի «Հին հայոց տաղաչափական արվեստը» (Շուշի, 1891) գրքի 124-րդ էջում Չարենցի գրառման մասին է: Առավել հանգամանալից տես նույն տեղում, էջ 203-205:

կերպով ծավալվել էր ինչպես Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ Հիտլերի իշխանության գլուխ անցնելուն պես, այնպես էլ պատերազմի ընթացքում: Պոտոսդամում (1934), ապա Շտուտգարտում (1942–1943) լույս տեսած «Հայկականություն–արիականություն» ժողովածուն միակը չէր, որ հերքում էր հայերի սեմական ծագումը, գիտականորեն փաստում և հավաստում արիական ծագումը՝ պնդելով նաև «հայ-գերմանական կապերը» (Փոլ Ռոհրբախ, Ալբերտ Կորթեր, Ֆոն Լեերս, Միսաք Թորլաքյան, Տիգրան Դևոյան, Հայկ Ասատրյան)⁷: Ինչ վերաբերում է Արեղյանների՝ բռնապետերին հղում կատարելու պատճառով հնչեցրած Ռասելի մեղադրանքներին, ապա դա ժամանակի վարչակարգերի հրամայականն էր՝ քննարկել, ըստ էության, ձևական, բայց անհրաժեշտ նախապայման, ինչն այսօր ինքնին հասկանալի է ու քննությունից դուրս, քանզի նույն կերպ կարելի է մեղադրական հնչեցնել Հ. Աճառյանին այն բանի համար, որ իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատությունը ձոնել է Ստալինին⁸:

Ջեյմս Ռասելի նմանօրինակ «վրիպումը» եզակի չէ: Ճշգրտելով Մայաթ-Նովայի խաղերից մեկում օգտագործված «շախաթայի» բառի ռասելյան «մեկնաբանությունը»՝ Վարդան Մատթեոսեանը միաժամանակ համադրում է հայ և օտար հայագիտությունը և մատնանշում, թե «Ռասըլ ղչ Պ. Սևակի և ղչ ալ Հենրիկ Բախչինեանի մենագրությունները կարդացած է, ուր յաւելեալ նշմարներ կը գտներ» (էջ 317):

Մայաթ-Նովային վերաբերող ակնարկին Մատթեոսեանն անդրադարձել է «Բանասիրական նշմարներ» հոդվածում: Վերջինս բաղկացած է ինը անդրադարձներից: Դրանցում ճշգրտվում են Մ. Նալբանդյանի «Ժտալացի աղջկա երգը»-ի հետ կապված կնձիռը, Բաֆֆու «Լեւնթը» վիպակի հերոս Վարդանի (իսկական անունը՝ Սամսոն) կուսակցական պատկանելության թնջուկը, Լեռ Կամսարի ազգանվան՝ տարբեր տառադարձումներով հիշատակումները (Թումայան, Թումադյան, Թովմադյան, Թովմայան, Թովմազյան), Զ. Եսայանի՝ ՀՅԴ-ից հեռանալու ու խորհրդային վարչակազմին «հակվելը» 1923 -ից հետո, Գ. Վարուժանի աշակերտի՝ նկարիչ Արման (Թադևոս) Մանուկյանի կյանքի ու ստեղծագործության համառոտ ուրվագիծն ու մահվան առեղծվածը, Վ. Շուշանյանի օրագրային էջի ողիսականը, Ա. Չոպանյանի և Շ. Շահնուրի միջև ծավալված վեճի դրդապատճառներն ու նրա հետագա զարգացումները, Գ. Էմինի «Հավերժի ճամփորդը»-ում (1984) «Միամանթոյի մենախոսությունը» բանաստեղծության բացակայության պատճառը՝ չնայած բովանդակության ցանկում նրա ընդգրկմանը:

«Ուսումնասիրություններ»-ում կարելի է առանձնացնել Վարդան Մատթեոսեանի Եղեռնի և հետեղեռնյան շրջանի վերաբերյալ բանասիրական հետազոտությունները: Դրանցից է «Արմեն Դօրեան՝ մոռցուած բանաստեղծ մը» ակնարկը՝ Եղեռնի գոհ դարձած վաղամեծիկ բանաստեղծ Արմեն Դոր-

7 Այս մասին տես նաև **Հենրիկ Բախչինեան**, «Արտաշես Արեղեան, Գէօթէ, Թատերգութիւններ», Եր., 1995, էջ 272-285:

8 «Նվիրում եմ գիտության մեծ կորիֆէյ, սովետական լեզվաբանության հիմնադիր, թանկագին Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինին», - տպագրված է աշխատության առաջին հատորի տխրոսաթերթին: Տես Հ. **Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. 1, Եր., 1962:

յանի (Հրաչյա Մուրենյան, 1892–1915 թթ.) կենսագրության ու ստեղծագործության ուրվագծումով՝ արքայազնից այնքան բանաստեղծական կեցվածքի մասին կցկցուոր տեղեկություններով համեմված, նրա արվեստի հանդեպ անտարբերության վերաբերյալ լռին հանդիմանանքով ու խոր լավատեսությամբ, որ այն պիտի խախտվի նրա ամբողջական գործերի հրատարակումով՝ որպես «գրական հուշաքար» անգերեզման բանաստեղծի հիշատակին:

Վարդան Մատթեոսեանի «Սպանիոյ թագաւորը և մեծ եղեռնի զոհ մտաւորականները» հետազոտությունն ամենաուշագրավն է թե՛ պատմական, թե՛ բանասիրական իմաստով՝ քաղաքական դեմքերի, փաստաթղթերի ու բազում վավերագրերի լայն շրջանառությամբ: Թեև Հայոց ցեղասպանությունն իրագործվեց Եվրոպայի անտարբեր հայացքի ներքո, սակայն «Աշխարհը լուռ ու մունջ չհետևեցաւ իրադարձութիւններուն, նոյնիսկ եթէ ողբերգութիւնը դադրեցնելու համար գործնապէս անգօր եղաւ կամ այդպէս ձևացաւ» (28): Հայ մտավորականներին փրկելու մարդասիրական իրենց քայլերն են կատարում Լեւիսիուսը, Իսպանիայի թագավոր Ալֆոնսո 13-ը՝ Պողոս Նուբարի, Արշակ Չոպանյանի և այլոց հուշումով: Թուրքական դիվանագիտության՝ հարցը ձգձգելու, ապատեղեկատվություն ստեղծելու, կեղծելու փորձված ու անվրեպ մեթոդն, այնուամենայնիվ, հասնում է իր նպատակին: Կատարվում է ծրագրվածը, և ստեղծվում պատրվակ՝ «Սպանիոյ թագաւորին կողմէ եղած խնդրանքին հետևանք չտալու համար» (32): **Էականը, ընդգծում է բանասերը, Ալֆոնսո 13-ի մարդասիրական նախաձեռնությունն ու միջամտությունն էր, որ թեև չհասավ իր նպատակին, սակայն մի ճիգ էր՝ կանխելու անդամնային:**

«Սպանագիր հայ գրողներ» ակնարկում Մատթեոսեանն ուրվագծում է իսպանալեզու հայ գրականությունը՝ որպես սփյուռքահայ գրականության առանձին երակ, սահմանելով «հայ սպանագիր գրականություն» հասկացությունը: Բանասերն այստեղ ընդգծում է լեզվական գործոնն ու աշխարհագրական սահմանների պարագան: Եթե իսպանալեզու հայ գրականության ձևավորման ակունքներում հայերեն իմացող և իսպանալեզու երկրներ գաղթած գրողներն էին, ապա, հայ գաղթօջախների ձևավորման հետևանքով, իսպաներենով ստեղծագործողները գրականություն են բերել թե՛ ազգային, թե՛ «հավաքական» ինքնության խնդիրները, թե՛ ցեղասպանությունը վերապրածների կյանքն ու հոգեվիճակը՝ ստանձնելով հայ գրականությունն այդ աշխարհին ներկայացնելու միջնորդությունը: Ձևավորվում է գրական, մշակութային կյանքը: Թարգմանվում են Գողթան երգերը, միջնադարյան և արդի հայ գրականությունը, հրատարակվում բանաստեղծությունների ծաղկաքաղերը, առանձին հոբելյանական հատորները, «Եղեռնի զոհերուն նվիրված» գրքույկը, ուրվագծվում է հայ ժողովրդի և արվեստի պատմությունը, լույս են տեսնում պարբերականներ և այլն: Ինչպես թարգմանությունների, այնպես էլ մամուլի պատմությունը Մատթեոսեանը ներկայացնում է ըստ ժամանակագրության, դրանք զուգահեռում սփյուռքահայ ինքնության և պատմության խնդիրներին, ըստ արժանվույն է գնահատում թարգմանությունների լեզվատճական առանձնահատկությունները: **Ըստ էության՝ գրականագետի այս բովանդա-**

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ե (ԺԵ) քաղթ, թիվ 3 (43) հայխ-մեպրեմբեր, 2013

ՎԻՄ համահայկական հանդես

Կալից ուրվագծումներն առանձին լայնածավալ նյութ են սփյուռքահայ գրականության պատմության հսկայական ծիրում:

2. Գրականություն–գիրք– մամուլ

Գրքի **հաջորդ բաժիններն** արտացոլում են Մատթեոսեանի գրական նախասիրություններն ու ճաշակը, գրականության պատմաբանի և բանասերի աշխատանոցը՝ դասական, արդի (հայ և թարգմանական), սփյուռքահայ (նաև՝ օտարալեզու) գրականություն, գրականագիտություն: Որպես առանցք սահմանվում են 20-րդ դարասկզբի իրադարձությունները՝ Եղեռն, պետականության ստեղծում և կորուստ, ստալինյան բռնություններ, դրանց հետևանքները հայ գրականության պատմության հետագա ընթացքի վրա: Գրական հանձնարարականների շարքում արժե շեշտել սփյուռքահայ գրականության պատմությանը նվիրված աշխատությունների հիշատակումը: Հատկանշական է, որ դեռևս սփյուռքահայ գրականության պատմության համակողմանի և գիտական ամբողջական հետազոտություն չկա: Պատճառները տարբեր են, սակայն ամենաէականը, թերևս, լեզվի գործոնն է: Այս հսկայական բացը լրացնելու փորձեր են Վազգեն Գաբրիելյանի, Գեղամ Սևանի, Մուրեն Դանիելյանի, Մինաս Թեօլեօլեանի, Գրիգոր Պըլտեանի, Մարկ Նշանեանի հետազոտությունները:

Գրեթե բոլոր գրախոսություններում Մատթեոսեանի ուշադրության առանցքում գրախոսվող հրատարակության մեթոդն է, կառուցվածքը, ինչի վրա էլ, ըստ էության, խարսխվում է գրքի հաջողությունը կամ ձախողումը: Այս իմաստով հատկանշական է հենց իր՝ Մատթեոսեան-բանասերի մեթոդը: Գիրքը գրախոսելիս նա չի սահմանափակվում ժանրի սահմանած հնարավորություններով, այլ, հավատարիմ իր սկզբունքին, նյութը ենթարկում է համակողմանի քննաբանման, մանրագնին հետազոտության, փաստերի համադրման, շեշտում վերնագրի դիպուկ և ճշգրիտ ընտրության, բարեխիղճ, համբերատար աշխատանքի կարևորությունը: Այսպես, «Նիկոլ Աղբալեանի նամակները», «Հրաչեայ Աճառեանի նամակները», «Համաստեղի նամակները», «Շահնուրեան նամականի» գրախոսություններում ընդգծվում են գրեթե նույն թերությունները՝ սկսած կառուցվածքային հիմնախնդրից, որ կարող է խոչընդոտել կենսագրության ու փոխհարաբերությունների վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելուն, ընդհուպ լատինատառ բառերի, նախադասությունների, արտահայտությունների թյուրընթերցումներն ու վերծանումները, մեքենագրական և ուղղագրական վրիպակները, թերի ծանոթագրությունները, ժամանակագրական սխալները, արխիվային սխալ հղումներ ունեցող նամակների, հասցեատերերի սխալ անվանումների, փաստերի ոչ ճիշտ կամ վիճելի մեկնաբանությունների ճշգրտումը: Իբրև օրինաչափություն՝ նշված վրիպումները վերաբերում են Հայաստանում հրատարակված նամականիների: Որպես հակադրություն շեշտելով Գրիգոր Քեօլեանի կազմած շահնուրյան նամականին⁹, Մատթեոսեանը ուշագրավ դիտողություն է անում. «Որքան որ մարդ չուզէ նման երևոյթներու մատնուիլ, երբեմն կը տարուիինք մտածելու, որ նախընտրելի է արևմտահայ/սփյուռ-

⁹ Տե՛ս **Շահան Շահնուր**, Նամականի, Ա., Պոստըն, 2001, 196 էջ:

քահայ հեղինակներու հրատարակութիւնը թողուլ Սփիւռքին, իսկ արևելահայ/հայաստանցիները՝ Հայաստանին: Քով-քովի դնելով վերջերս Երևանի մէջ լոյս տեսած Համաստեղի «Նամականի»ն և Միացեալ Նահանգներու մէջ տպուած Շահան Շահնուրի «Նամականի»ի Բ. Հատորը¹⁰, խորհրդային տարիներէն եկող այս նախնական եզրակացութիւնը կարծէք կ'ամրապնդուի» (էջ 526): Թերևս մնում է հավելել, որ այն, ինչ մարդկային կարողության սահմաններում է (առավել ևս գրքի տպագրության պարագայում, երբ վերջինս ծառայում է ժամանակի բոլոր տիրույթներին), հնարավոր է իրագործել անթերի, ինչին ձգտում է բանասերը թե՛ հավելումներով, թե՛ դիտողություններով և թե՛ հանգամանալից ծանոթագրություններով:

Գրքի **երրորդ բաժնում** Մատթէոսեանն անդրադարձել է մամուլի հրապարակումներին: Դրանք քննում են հայագիտության առջև ծառայած խնդիրները՝ հայերենի երկու ճյուղերն ու միասնական ուղղագրության անհրաժեշտությունը, գրականության ներկան ու հետագա ճակատագիրը, Սփյուռքի մամուլն ու նրա պատմությունը, առավելություններն ու թերությունները, գրական-մշակութային-քաղաքական ծրագրերը, գաղափարախոսությունն ու հայապահպան առաքելությունը, գրական նոր հոսանքները, գրականագիտության հետազոտական մեթոդաբանության նոր ուղղությունների անհրաժեշտությունը և այլն: Ըստ էության «Հայրենի գրականութեան հարցեր» խորագիրը կրող հոդվածաշարն այն հարցականների ամփոփումն է, որ բարձրացնում են Թադևոս Խաչատրյանը («գրականություն-կյանք-գրականագիտություն»), Քրիստինե Հովհաննիսյանը («գրականություն-կյանք-քննադատություն»), Դավիթ Գասպարյան-Մերգեյ Սարինյան երկխոսությունը: Դրանց հանդեպ Մատթէոսեանի արձագանքը զուտ բանասերի կամ գրականագետի դիրքերից չէ, այլ Սփյուռքում ապրող և ստեղծագործող մտավորականի տագնապ է, քանզի հայ գրականագիտության ծիրից չպետք է բացառել սփյուռքահայ գրականությունը:

Մնում է հավելել, որ Վարդան Մատթէոսեանի ոճը միանգամայն ներդաշնակ է մտավորականի նրա համեստ և բարեկիրթ կերպարին՝ զերծ ավելորդ հավակնություններից, անպաճույճ, անմիջական, զուսպ, միտքը՝ որոնող և բեղուն, իսկ տեսակետները՝ երկխոսության և առողջ բանավեճի տրամադրող:

Նարինե Ա. Պետրոսյան
Բանաս. գիտ. թեկնածու

**Vardan Matteosean, Literary-philological
researches, editor - doct. Armenak Eghiyanyan,
Antelias, Lebanon, 2009, 663 pages**

Narine A. Petrosyan

10 Տե՛ս **Շահան Շահնուր**, Նամականի, Բ., Պոստրն, 2004, 228 էջ:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ե (ՃԵ) ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, 2013
ՎԷՄ համահայկական հանդես